**«ՀԱՅՈՑ ԱՐԾԻՎՆԵՐ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ»**
**կուսակցություն**

**"ARMENIAN EAGLES. UNITED ARMENIAN"**
**party**

**партия "АРМЯНСКИЕ ОРЛЫ. ЕДИНАЯ АРМЕНИЯ"**


✉ ՀՀ, ք. Երևան, Երկաթուղայինների 2-րդ փ., տուն 2/3, ☎(+374 10) 43-50-34, ֆաքս (+374 10) 43-50-34, (+374 77) 81-11-11
✉ РА, г. Ереван, ул. Железнодорожников-2, дом 2/3, ☎(+374 10) 43-50-34, факс (+374 10) 43-50-34, (+374 77) 81-11-11
✉ House 2/3, Yerkatughayinery street 2, Yerevan sity, RA ☎(+374 10) 43-50-34, fax (+374 10) 43-50-34, (+374 77) 81-11-11
E-mail: HAMHK@mail.ru, hayocartsivner@mail.ru
www.hayocartsivner.am


*No. 028*

*« 11 » մարտի 2020 թ.*

Երևան քաղաքի քաղաքապետ
Հայկ Մարությանին

## Դ Ի Մ Ու Մ

Հարգելի՛ պարոն քաղաքապետ

Նորանկախ Հայաստանի պետականաշինության գործում լրջագույն ներդրում ունեցած և 15 տարիների ընթացքում շուրջ 1.500 հայրենասիրական և ռազմահայրենասիրական բնույթի միջոցառումներ կազմակերպած «Սյունյաց և Հայոց Արծիվներ» հայրենասիրական կազմակերպությունների (www.hayocartsivner.am) ավելի քան 300 մասնաճյուղերի ամուր հիմքի վրա ձևավորված «Հայոց Արծիվներ. Միասնական Հայաստան» ազգային քրիստոնյա կուսակցությունը նախատեսում է սույն թվականի ապրիլի 6-ին, 7-ին, 8-ին, 9-ին՝ ժամը 17:00-ից մինչև 20:00-ն, Երևան քաղաքի Մատենադարանի հարակից հրապարակում կազմակերպել խաղաղ հանրահավաքներ (ըստ ՀՀ «Հավաքների ազատության մասին» օրենքի՝ ընդունված 2011 թվականի ապրիլի 14-ին), իսկ սույն թվականի ապրիլի 6-ին, 7-ին, 8-ին, 9-ին՝ ժամը 20:00-ից մինչև 22:00-ն, անցկացնել խաղաղ երթեր (ըստ ՀՀ «Հավաքների ազատության մասին» օրենքի՝ ընդունված 2011 թվականի ապրիլի 14-ին)

20/27310 11.03.20

Մատենադարանի հարակից հրապարակից դեպի Մաշտոց-Սայաթ Նովա-Աբովյան փողոցներ, Հանրապետության հրապարակ երթուղիներով:

Վերոնշյալ հանրահավաքների և երթերի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, բնակիչներին հաղորդել հստակ տեղեկություն՝ «Հայոց Արծիվներ. Միասնական Հայաստան» կուսակցության ղեկավար կազմի՝ Նախագահության դիրքորոշման վերաբերյալ՝ կապված Հայաստանում և Հայաստանից դուրս տեղի ունեցող քաղաքական գործընթացների հետ, ինչպես նաև «Հայոց Արծիվներ. Միասնական Հայաստան» կուսակցության կողմից Հայաստանի Հանրապետության Վարչապետին և Կառավարությանը սույն թվականի փետրվարի 20-ին ներկայացրած 10 պահանջների մասին:

Վերոնշյալ հանրահավաքների և երթերի ժամանակ՝

1. Մասնակիցների սպասվող թիվը կլինի 1000-ից ավելի:
2. Կօգտագործենք տեխնիկական սարքավորումներ և ոչ միայն (ուժեղացուցիչ (ուսիլիտել), միկրոֆոններ, բարձրախոսներ, եռագույն դրոշներ, «Հայոց Արծիվներ. Միասնական Հայաստան» կուսակցության դրոշներ, պաստառներ):
3. Կաշխատեն լուսանկարիչներ, օպերատորներ, լրագրողներ:
4. Կլինեն նվազագույնը 10-ը կարգադրիչներ, ովքեր իրենց վրա կկրեն սպիտակ, տեսանելի տարբերանշաններ, որոնց վրա գրված կլինի «Կարգադրիչ»:

Նախատեսվում է նաև սույն թվականի մարտի 27-ից մինչև ապրիլի 2-ը ներառյալ Երևան քաղաքի 12 վարչական շրջանների փողոցներում կազմակերպել իրազեկման միջոցառումներ. շրջել մեքենաներով և մեքենաների միջից բարձրախոսներով տարածել հայտարարություն, ինչպես նաև քաղաքացիներին բաժանել փոքրիկ տեղեկատվական թռթեր (15սմ X 21 սմ կամ A4 չափսի)՝ ապրիլի 6-ից 9-ը վերոնշյալ տարածքներում տեղի ունենալիք հանրահավաքների և երթերի մասին:

Հարգելի՛ պարոն քաղաքապետ

Դիմում ենք Ձեզ խնդրանքով՝ օրենքի սահմաններում թույլատրել «Հայոց Արծիվներ. Միասնական Հայաստան» կուսակցությանը սույն թվականի ապրիլի 6-ին, 7-ին, 8-ին, 9-ին՝ ժամը 17:00-ից մինչև 22:00-ն, Մատենադարանի հարակից հրապարակում՝ վերոնշյալ երթուղիներով,

կազմակերպել խաղաղ հանրահավաքներ և խաղաղ երթեր. վերոնշյալ հանրահավաքներն ու երթերն ընդունել ի գիտություն:

Միաժամանակ խնդրում ենք ցուցաբերել միջնորդություն՝ ՀՀ Ոստիկանության Երևան քաղաքի ոստիկանության վարչության օժանդակությամբ ապահովել հանրահավաքների և երթերիի անվտանգությունը:

Խնդրում ենք նաև թույլատրել և ընդունել ի գիտություն՝ սույն թվականի մարտի 27-ից մինչև ապրիլի 2-ը ներառյալ Երևան քաղաքի 12 վարչական շրջանների փողոցներում կազմակերպվելիք իրազեկման միջոցառումների կայացումը:

Վերոնշյալ հանրահավաքների և երթերի, Երևան քաղաքի 12 վարչական շրջանների փողոցներում կազմակերպվելիք իրազեկման միջոցառումների կազմակերպիչներն ու ղեկավարներն են.

| Հ/Հ | Անուն Ազգանուն Հայրանուն | Անձնագիր | Հեռախոսահամար | Էլ.հասցե | Փոստային հասցե |
|---|---|---|---|---|---|
| 1. | Գարեգին Բարխուդարյան Ալբերտի | 010 AT0375474 | 098888977 | hayocartsivner@mail.ru | ՀՀ, ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Երկաթուղայինների 2 փ., տուն 2/3 |
| 2. | Էդգար Ավետիսյան Սմբաթի | 044 AT0368895 | 098811101 | hayocartsivner@mail.ru | ՀՀ, ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Երկաթուղայինների 2 փ., տուն 2/3 |
| 3. | Սամսոն Ջիրոյան Սամիկոնի | 001 AS0206796 | 098999971 | hayocartsivner@mail.ru | ՀՀ, ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Երկաթուղայինների 2 փ., տուն 2/3 |
| 4. | Խաչիկ Ասրյան Մայիսի | 010 AS0581111 | 098811111 | hayocartsivner@mail.ru | ՀՀ, ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Երկաթուղայինների 2 փ., տուն 2/3 |

Կից ներկայացնում ենք «Հայոց Արծիվներ. Միասնական Հայաստան» կուսակցության ղեկավար կազմի՝ Նախագահության որոշումը՝ վերոնշյալ հանրահավաքների և վերոնշյալ երթերի մասին:

Կից ներկայացնում ենք նաև «Հայոց Արծիվներ. Միասնական Հայաստան» կուսակցության կողմից Հայաստանի Հանրապետության Վարչապետին և Կառավարությանը սույն թվականի փետրվարի 20-ին ներկայացրած 10 պահանջները:

Կուսակցության նախագահ՝ Խաչիկ Մայիսի Ասրյան